Դասավանդման ենթակոմիտեի գրառումներ
6-25-2020

Այս հանդիպման նպատակն էր վերանայել տարրական, միջանկյալ և միջնակարգ դպրոցների ընթացիկ դասացուցակները:

1 **Տարրական դպրոց.**

· Առավոտյան/կեսօրից հետո մոդելը կիրառել շաբաթը 4 օր: Աշակերտները դպրոց կհաճախեն երկուշաբթիից մինչև հինգշաբթի՝ առավոտյան կամ կեսօրից հետո հերթափոխով և օրվա մնացած մասը կանցկացնեն հեռակա ուսուցման եղանակով: Նաև, 5-րդ օրը կանցկացնեն լրիվ հեռակա ուսուցման եղանակով:

· Հերթափոխների միջև երկար դադար կտրվի՝ ուսուցիչների ճաշի ժամ հատկացնելու և դպրոցը մաքրելու նպատակով: Ըստ Լոս Անջելեսի գավառի հանրային առողջապահական գրասենյակի հրահանգների, այն կփոփոխվի ավելացնելով ավելի շատ դասավանդման ժամ:

· Աշակերտները կճաշեն տանը դասերից հետո, կամ դպրոց գալուց առաջ:

· Անվճար և զեղչված գնող սննունդ ստացող երեխաներին կհատկացվեն պատրաստի ճաշեր, որոնք կարող են վերցնել դպրոցից:

· Ըստ պահանջի, կկիրառվեն նույն պայմանները Հատուկ ուսուցման և անգլերեն սովորող աշակերտներին ավելի շատ դասավանդման ժամով ապահովելու համար:

2 **Միջանկյալ դպրոց.**

· Առավոտյան/կեսօրից հետո մոդելը կիրառել շաբաթը 4 օր: Աշակերտները դպրոց կհաճախեն երկուշաբթիից մինչև հինգշաբթի՝ առավոտյան կամ կեսօրից հետո հերթափոխով և օրվա մնացած մասը կանցկացնեն հեռակա ուսուցման եղանակով: Նաև, 5-րդ օրը կանցկացնեն լրիվ հեռակա ուսուցման եղանակով:

· Աշակերտները կունենան 6 դասընթաց փոփոխված դասացուցակով (block schedule), երկուշաբթի և երեքշաբթի 1-3-րդ դասընթացները, իսկ չորեքշաբթի և հինգշաբթի օրերին՝ 4-6-րդ դասընթացները:

3 **Միջնակարգ դպրոց.**

· Առավոտյան/կեսօրից հետո մոդելը կիրառել շաբաթը 4 օր: Աշակերտները դպրոց կհաճախեն երկուշաբթիից մինչև հինգշաբթի՝ առավոտյան կամ կեսօրից հետո հերթափոխով և օրվա մնացած մասը կանցկացնեն հեռակա ուսուցման եղանակով: Նաև, 5-րդ օրը կանցկացնեն լրիվ հեռակա ուսուցման եղանակով:

· Աշակերտները կունենան 3 դասընթաց 10 շաբաթ տևողությամբ՝ 1-3-րդ դասընթացները առաջին 10 շաբաթների ընթացքում, իսկ 4-6-րդ դասընթացները՝ երկրորդ 10 շաբաթների ընթացքում:

4 **Միջնակարգ դպրոց – ամենավերջին ավելացում (չի առաջարկվում ենթակոմիտեի կողմից).**

· 2 լրիվ օր անձամբ հաճախել դպրոց, 3 լրիվ օր ՝ հեռակա ուսուցում:

· Աշակերտները կունենան բոլոր 6 դասընթացները շաբաթը 2 անգամ:

· Աշակերտները կճաշեն դպրոցում ՝ պահպանելով հասարակական հեռավորություն պահելու պահանջները:

Քննադատվեց տարրական դպրոցի երեխաների խնամքի ծրագիրը: Անկախ ընտրած մոդելի, հիբրիդ տարբերակը ավելի շատ երեխաների խնամք է պահանջում: Դպրոցական շրջանն աշխատում է մյուս գործակալությունների հետ այս հարցին լուծում տալու համար:

Միջանկյալ դպրոցի դասացուցակը ընդունվեց դասավանդման ենթակոմիտեի կողմից, չնայած այն բանի, ոմանք կարծում են, որ օրական 3 դասընթաց ունենալու մոդելը նույնպես լավ կլինի միջանկյալ դպրոցի աշակերտների համար: Մտահոգություններ կային նաև այն մասին, որ օրական 3 դասընթաց ունենալը դժվար կլինի Հատուկ ուսուցման ծառայություններ ստացող աշակերտների համար: 6 դասընթացի մոդելի ընթացքում, յուրաքանչյուր դաս տեղի կունենա շաբաթը 2 անգամ անձամբ դպրոց հաճախելով, իսկ 3 դասընթացի մոդելի ընթացքում՝ շաբաթը 4 անգամ, բայց ոչ ամբողջ կիսամյակի ընթացքում: **2 մոդելների ընթացքում դասաժամը նույն** է:

Միջնակարգ դպրոցի մոդելի քննարկումը կատարվեց 3 դասընթացի մոդելի վերաբերյալ ի հակադրություն միջանկյալ դպրոցի 6 դասընթաց ունենալուն: Քանի որ 2 մոդելներն էլ լավ տարբերակ կհանդիսանան յուրաքանչյուր դասարանի համար, միջնակարգ դպրոցի մոդելը թույլ է տալիս աշակերտին միաժամանակ կենտրոնանալ 3 դասընթացների վրա և հնարավոր է նաև ունենալ 0 դասաժամ, 7-րդ դասաժամը՝ մասնագիտական տեխնիկական կրթության կամ քոլեջի դաս վերցնելու համար և կարող է նաև զբաղվել սպորտով: Այն ժամանակ է հատկացնում նաև հատուկ դասընթաց վերցնելու համար, որոնցից է երգչախումբը: Միջնակարգ դպրոցներն ավելի շատ արտադասարանական միջոցառումներ ունեն, քան միջանկյալ դպրոցը:

Միջնակարգ դպրոցի վերջում ավելացված մոդելն առաջ քաշվեց, որովհետև միջնակարգ դպրոցի ներկայացուցիչներից մեկը հարցադրման միջոցով պարզել է, որ իր դպրոցի ուսուցիչների մոտավորապես 50%-ը հետաքրքրված էին դպրոց հաճախել 2 օր և մնացած 3 օրն անցկացնել հեռակա ուսուցման մոդելով:

Ահա խմբի մտահոգությունները.

1. Որոշ ծնողների համար խնդիր կհանդիսանա երեխաների խնամքը համապատասխանեցնել իրենց ընտանիքի և աշխատանքային դասացուցակի հետ:
2. Եթե աշակերտների կեսը շաբաթը 4 օր դպրոցում ճաշի, ապա դժվար կլինի նրանց համար

ֆիզիկական հեռավորության պահպանումը: Ամեն օր, աշակերտների ամբոխը կմեծացնի աշակերտների և աշխատակիցների վարակվելու հնարավորությունը: Դա հավաքարարներին կպահի բուֆետի տարածքում և ոչ թե բարձր երթևեկության/հպման տարածներում, որոնցից են սանհանգույցները, դռները և խմելու ջրի շատրվանները:

3. Քանի դեռ Լոս Անջելեսի գավառի հանրային առողջապահության կանոնակարգերը կթույլատրեն աշակերտներին անձամբ դպրոց հաճախել, խումբը կցանկանա դասաժամն աժավելագույնի հասցնել:

Չնայած, խումբը չառաջարկեց վերջում ավելացված մոդելը ավելացնել դասացուցակին, բայց կարևոր էր խոսել այդ մասին, քանի որ դրանով հետաքրքրված էին մի քանի ուսուցիչներ և ծնողներ:

Խումբը սահմանափակ քննարկում կատարեց ուսումնական ծրագրի շուրջ:
Ներկայիս ծրագիրն է ընդլայնել Անկախ կրթության ակադեմիայի (ILA) դասընթացները միջնակարգ դպրոցի (7-12-րդ դասարաններ) աշակերտների համար, ովքեր հետաքրքրված են 100% հեռակա ուսուցման մոդելով: Անկախ կրթության ակադեմիայի ուսումնական ծրագիրը APEX-ն է: Մտահոգություն կար ծրագրի արժեքի շուրջ, բայց այն նվազեցվել է հաշվի առնելով ընթացիկ համաճարակը: Ներկայիս արժեքը $45,000 դոլար է 300 արտոնագրի համար, բայց 2020-2021 ուսումնական տարվա համար, դպրոցական շրջանը կկարողանա արտոնագիր ձեռքբերել միջնակարգ դպրոցի բոլոր աշակերտների համար վճարելով միայն $86,000 դոլար:

Տարրական դպրոցի աշակերտների համար, որոնց ընտանիքները հետաքրքրված են սկսել ուսումնական տարին 100% հեռակա ուսուցման մոդելով, ուսումնական ծրագիրը կազմված կլինի հիմնական կրթական ծրագրից: Մենք կշարունակենք լրացուցիչ ծրագրեր հետազոտել, որոնք ավելի լավ կհոգան Հատուկ ուսուցման ծառայություններ ստացող աշակերտների կարիքները: